



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N 404/249-2019

ք.Արտաշատ

„06“ „11“ 2019թ.

Ն Ե Ր Ք Ի Ն Ա ՈՒ Դ Ի Տ Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Ն Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2019 թվականի տարեկան ծրագրով.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Արարատ քաղաքի թիվ 3 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում 2019 թվականի նոյեմբերի 07-ից մինչև նոյեմբերի 12-ը ներառյալ՝ 4 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:

2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Արարատ քաղաքի թիվ 3 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կողմից 2016, 2017, 2018 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառնությունները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:

3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

 Recoverable Signature

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐՏԱՎԱԶԴ